



ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	1
1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	3
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	6
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման	6
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	8
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի	10
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ.....	12
5. ԱՄՓՈՓՈՒՄ	13

ՆԱԽԱԲԱՆ

Երևան քաղաքի հիմնական ֆինանսական փաստաթուղթ հանդիսացող տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ դրանով, մասնավորապես, հնարավորություն է ընձեռվում գնահատել քաղաքային իշխանությունների կառավարման արդյունավետությունն ու առկա խնդիրների լուծման ընթացքը:

Նկատի ունենալով հիմնահարցի կարևորությունը՝ «Լոյս» հիմնադրամը Երևան քաղաքի բյուջեի կատարման յուրաքանչյուր տարվա հաշվետվության հրապարակումից հետո կատարում է դրա վերաբերյալ վերլուծություն¹:

Սույն տեղեկանքի սկզբում տրվում է Երևան քաղաքի 2023թ. բյուջեի ընդհանուր նկարագիրը: Այնուհետև առանձին բաժիններով ներկայացվում են բյուջեի եկամուտները, ծախսերը (ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման, ինչպես նաև ըստ ծրագրերի) և բյուջեի պակասուրդը: Վերջում հակիրճ ներկայացվում են վերլուծության կարևոր արդյունքներն ու եզրահանգումները:

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


«Տնտեսության՝ ընդհանուր առմամբ բարենպաստ զարգացումները դրականորեն են ազդել Երևան քաղաքի բյուջեի եկամուտների ձևավորման տեսանկյունից, սակայն ծախսերը շարունակել են թերակատարվել:

2023թ. փաստացի եկամուտները կազմել են 114.8 մլրդ դրամ: Տարվա ընթացքում կատարվել են 111.2 մլրդ դրամի ծախսեր՝ տարեկան ճշտված պլանով նախատեսվածի 89.6%-ը:

Երևանի բյուջեի եկամուտները ճշտված պլանի համեմատ գերակատարվել են 1.7%-ով: **Այնուամենայնիվ, ֆոնդային բյուջեով նախատեսվող եկամուտների գծով առկա է էական՝ 47.6%, թերակատարում:**

¹ 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լոյս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ <https://www.luys.am/>:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ



Բյուջեի ծախսերը շարունակել են թերակատարվել: Ի դեպ, թերակատարում է արձանագրվել ինչպես բյուջեի ընդհանուր ծախսերի, այնպես էլ վարչական ու ֆոնդային բյուջեներով նախատեսված ծախսերի առումով: Ընդհանուր ծախսերը թերակատարվել են 10.4%-ով, վարչական բյուջեով նախատեսված ծախսերը՝ 10.7%-ով, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը՝ 28.1%-ով: Ֆոնդային բյուջեի ծախսերի նման մեծ թերակատարումը վկայում է այն մասին, որ Երևան քաղաքի մակարդակով ևս (ինչպես համապետական մակարդակով) կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների հետ կապված խնդիրները շարունակում են մնալ չլուծված:

Աղյուսակ 1. Երևան քաղաքի բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլն դրամ) և դրանց կատարողականը, 2023թ.


	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	105.1	112.9	114.8	109.3%	101.7%
Վարչական բյուջե	104.0	112.1	113.5	109.2%	101.3%
Ֆոնդային բյուջե	9.3	8.5	4.5	47.9%	52.4%
Ծախսեր	105.5	124.1	111.2	105.3%	89.6%
Վարչական բյուջե	104.0	112.1	100.1	96.3%	89.3%
Ֆոնդային բյուջե	9.7	19.7	14.2	145.5%	71.9%
Հավելուրդ	-0.4	-11.2	3.7	-	-

2023թ. քաղաքային բյուջեն ունեցել է 3.7 մլրդ դրամի հավելուրդ՝ ճշտված պլանով նախատեսված 11.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց, թեև հաստատված բյուջեով նախատեսված մեծության համեմատ այն էապես՝ շուրջ 26 անգամ, բարձրացվել է:

2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Երևանի 2023 թվականի բյուջեի եկամուտների կառուցվածքը որոշակի փոփոխություններ է կրել: Փաստացի ձևավորված եկամուտների կառուցվածքում հարկային եկամուտների և տուրքերի տեսակարար կշիռը 2022-ի ցուցանիշի համեմատ նվազել է 2.6 տոկոսային կետով և կազմում է 24.2%: Դրանից 8.6 տոկոսային կետը կազմում են անշարժ գույքի հարկերը, 10.8 տոկոսային կետը՝ այլ գույքային հարկերը, 4.1 տոկոսային կետը՝ տեղական տուրքերը, իսկ 0.7 տոկոսային կետը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը: Բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ պաշտոնական դրամաշնորհների (որոնք հիմնականում ստացվել են պետական բյուջեից) տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.2 տոկոսային կետով և կազմել 19.4%: Բյուջեի եկամուտների մնացած մասը՝ 56.4%-ը, ապահովվել է այլ եկամուտների հաշվին (2022-ին այս ցուցանիշը 47.6% էր): Այլ եկամուտների զգալի մասը՝ 37.0 տոկոսային կետը, կազմել են ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները: Բյուջեի այլ եկամուտների տեսակարար կշիռը 2022-ի համեմատ աճել է 8.8 տոկոսային կետով: Այդ աճը հիմնականում պայմանավորված է պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների տեսակարար կշռի՝ 3.6 և տեղական վճարների տեսակարար կշռի՝ 8.0 տոկոսային կետով ավելացմամբ:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կառուցվածքը, %



Բյուջեի եկամուտները նախորդ տարվա ցուցանիշին գերազանցում են 33.2%-ով և տարեկան ճշտված պլանի մեծությամբ ավելի են 1.7%-ով: Նախորդ տարվա համեմատ աճին ամենամեծ նպաստումն ունեցել են «Այլ եկամուտներ» դասի «Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և

Ճառայությունների մատուցումից» բաժնում ընդգրկված «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» (ընդհանուր եկամուտների աճին նպաստումը՝ 15.9 տոկոսային կետ) և «Վարչական գանձումներ» բաժնում ընդգրկված «Տեղական վճարներ» (նպաստումը՝ 12.8 տոկոսային կետ) հոդվածներով ստացված եկամուտների աճերը:

Ընդհանուր հարկային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 20.2%-ով: Այդ աճը հիմնականում պայմանավորված է եղել գույքային հարկերից համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների դիմաց գույքահարկի ծավալների՝ համապատասխանաբար 28.9% և 14.1% աճով: Անշարժ գույքից գանձվող հարկերի աճը, մասնավորապես, պայմանավորված է գույքահարկի բարձրացմամբ: Չնայած նախորդ տարվա համեմատ արձանագրված աճին, անշարժ գույքից գանձվող գույքային հարկերը, միևնույն է, այս տարի ևս տարեկան ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 15.6%-ով կամ 1.8 մլրդ դրամով: **Նկատի ունենալով, որ գույքահարկի բազան 2023թ. բյուջեի հաստատման պահի համեմատ չի նվազել (դրա մասին է վկայում այն, որ տարեկան ճշտված պլանում հաստատված պլանի համապատասխան մեծությունը մնացել է անփոփոխ), անշարժ գույքի հարկի՝ հաստատված պլանից պակաս հավաքագրումը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է վարչարարության անարդյունավետությամբ:**

Տրանսպորտային միջոցների համար վճարվող գույքահարկի թերակատարումն ավելի փոքր է՝ 3.1%:

Աղյուսակ 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները 2023 թվականին

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2022թ. նկատմամբ, %
				մլրդ դրամ		
Ընդամենը եկամուտներ	105.1	112.9	114.8	109.3	101.7	33.2
Հարկեր և տուրքեր	28.2	28.6	27.8	98.5	97.3	20.2
Գույքային հարկեր անշարժ գույքից	11.7	11.7	9.9	84.4	84.4	25.3
Գույքային հարկեր այլ գույքից	12.8	12.8	12.4	96.9	96.9	14.1
Տեղական տուրքեր	3.2	3.6	4.7	147.4	133.0	31.2
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	0.5	0.5	0.8	155.6	155.6	2.1

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2022թ. նկատմամբ, %
				մլրդ. դրամ		
Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	22.5	23.1	22.3	99.1	96.7	1.3
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	1.4	1.4	0.4	29.8	29.8	13.2
Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0.4	0.3	0.6	168.1	241.0	10.7
Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	20.0	20.9	20.9	104.3	99.8	1.1
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	0.7	0.5	0.4	48.9	72.5	-12.8
Այլ եկամուտներ	54.4	61.2	64.7	119.0	105.7	57.7
Շահաբաժիններ	0.1	0.1	0.4	380.6	380.6	52.7
Գույքի վարձակալությունից եկամուտներ	1.8	1.8	1.5	80.9	80.9	-6.0
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	43.8	45.4	42.5	97.0	93.4	47.5
Վարչական գանձումներ	7.3	12.1	17.2	234.6	143.0	157.1
Մուտքեր տույժերից, տուգանքներից	0.6	0.6	1.4	254.1	254.1	-12.4
Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	173.0	173.0	128.1
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.3	-	-	167.7 անգամ
Այլ եկամուտներ	0.7	1.2	1.4	200.2	118.5	-28.5

Պաշտոնական դրամաշնորհները նախորդ տարվա համեմատ աճել են 1.3%-ով, սակայն ճշտված պլանի համեմատ դրանց գծով առկա է թերակատարում՝ 3.3% կամ 0.8 մլրդ. դրամ: Պաշտոնական դրամաշնորհների ընդհանուր մեծության հիմնական մասը կազմում են կառավարման այլ մակարդակներից

(մասնավորապես՝ կառավարությունից) ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները, որոնց ծավալը կազմել է 20.9 մլրդ դրամ կամ նախորդ տարվա ցուցանիշից 1.1%-ով ավելի: Կառավարությունից ստացվող կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհների ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 12.8%-ով, և դրանց գծով թերակատարումը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 27.5%: **Չնայած պաշտոնական դրամաշնորհների ընդհանուր մեծության աճին, Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ դրանց տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ բավական կտրուկ՝ 6.2 տոկոսային կետով, նվազել է:** Պատճառն այն է, որ բյուջեի եկամուտների մյուս երկու եկամտատեսակների խմբերի (հատկապես՝ «Այլ եկամուտների») գծով աճն անհամեմատ ավելի մեծ է եղել:

Բյուջեի այլ եկամուտները 2023 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 57.7%-ով և կազմել են 64.7 մլրդ դրամ: Այլ եկամուտների կազմում դրամական արտահայտությամբ բարձր աճ է գրանցվել վարչական գանձումների գծով (10.5 մլրդ դրամով կամ շուրջ 2.6 անգամ): Տոկոսային արտահայտությամբ ամենամեծ աճը գրանցվել է կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով, սակայն դրա պատճառն այն է, որ ցուցանիշը անցյալ տարվա գրեթե զրոյական մեծությունից աճել է մինչև 0.3 մլրդ դրամ (սակայն դրա կշիռը եկամուտների ընդհանուր մեծության մեջ, միևնույն է, մնացել է աննշան): Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից բյուջեի եկամուտները կազմել են 42.5 մլրդ դրամ: Դրանք նախորդ տարվա համեմատ 47.5%-ով ավելի են, սակայն ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 6.6%-ով:

3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Երևան քաղաքի բյուջեի 2023թ. ընդհանուր ծախսերը կազմել են 111.2 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել են 17.3%-ով: Չնայած դրան, արձանագրվել է ճշտված պլանի նկատմամբ ծախսերի էական՝ 10.4%-ով, թերակատարում:

Ըստ դասակարգումների ծախսերի վերաբերյալ առավել հանգամանալի վերլուծությունը ներկայացվում է ստորև:


3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Երևան քաղաքի բյուջեի ծախսային հոդվածներն ըստ տնտեսագիտական դասակարգման ներառված են *ընթացիկ ծախսեր, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր* խմբերում:

2023թ. բյուջեով պլանավորված էին 95.9 մլրդ դրամի ընթացիկ ծախսեր: Սակայն ճշտված պլանով դրանց մեծությունը բարձրացվել է մինչև 104.4 մլրդ

դրամ, իսկ փաստացի ցուցանիշը կազմել է 97.0 մլրդ դրամ: Ճշտված պլանի համեմատ թերակատարումը կազմել է 7.1%:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ, 2023թ.



Ընթացիկ ծախսերի՝ նախորդ տարվա համեմատ 23.2%-ով աճը հիմնականում «Այլ ծախսեր» բաժնի «Այլ ծախսեր» հոդվածի (հոդվածի բացվածքը հաշվետվությունում չի ներկայացվում) 2.2 անգամ աճի հաշվին է: Աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերը և սուբսիդիաներն աճել են համապատասխանաբար 12.0 և 3.7 տոկոսով: **Ի դեպ, պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերը 2022-ի համեմատ աճել են 3 անգամ կամ 555.7 մլն դրամով:**

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) փաստացի մեծությունը նախորդ տարվա փաստացի մեծության համեմատ աճել է 10.1%-ով, սակայն դրանք շարունակել են թերակատարվել. **ճշտված պլանի նկատմամբ թերակատարումը կազմել է 21.2%:**

Այդուհանդերձ, բյուջեի ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը նվազել է՝ նախորդ տարվա 21.1%-ից հասնելով 19.8%-ի, մինչդեռ ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռն աճել է 4.2 տոկոսային կետով և կազմել 87.3%:

Աղյուսակ 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլրդ դրամ) և դրանց կատարողականը, 2023թ.

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2022թ. նկատմամբ, %
				մլրդ դրամ		
Ընդամենը ծախսեր	105.5	124.1	111.2	105.3	89.6	17.3
Ընթացիկ ծախսեր	95.9	104.4	97.0	101.1	92.9	23.2
Աշխատանքի վարձատրություն	11.2	11.8	11.7	104.0	98.7	12.0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	11.9	13.9	11.7	98.9	84.4	16.7
<i>Տոկոսավճարներ</i>	0.0	0.0	0.0	82.0	82.0	241.5
Սուբսիդիաներ	46.8	46.3	46.1	98.6	99.5	3.7
Դրամաշնորհներ	0.5	1.4	0.9	178.1	65.9	-38.1
<i>Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ</i>	0.9	1.7	1.3	146.4	79.6	38.8
<i>Այլ ծախսեր</i>	24.6	29.3	25.3	102.6	86.2	121.7
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	14.9	27.9	22.0	147.7	78.8	10.1
Հիմնական միջոցներ	14.9	27.9	22.0	147.7	78.8	10.1
Պաշարներ	0.0	0.0	0.0	-	-	-
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-5.3	-8.2	-7.8	149.0	95.3	100.5

Տնտեսագիտական դասակարգմամբ ծախսերի բոլոր հոդվածների գծով ճշտված պլանի նկատմամբ արձանագրվել է թերակատարում (Աղյուսակ 3):


3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Երևան քաղաքի բյուջեի ռեսուրսների օգտագործման ուղղությունները ներկայացնելու նպատակով ուսումնասիրվել են բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման:

2023թ. բյուջեի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը ունեցել են տնտեսական ծառայություններին և կրթության ոլորտին ուղղվող ծախսերը: Դրանց ծավալները կազմել են համապատասխանաբար 41.6 և 36.5 մլրդ դրամ, իսկ

ընդհանուր ծախսերում կշիռները՝ համապատասխանաբար 37.4% և 32.8%: 2023թ. սոցիալական ծառայություններին ուղղվել են 19.1 մլրդ դրամի ծախսեր կամ ընդհանուր ծախսերի 17.2%-ը:

Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ, 2023թ.



Ճշտված պլանի նկատմամբ թերակատարում է արձանագրվել գործառնական դասակարգման բոլոր հոդվածների գծով (Աղյուսակ 4): Ընդհանուր ծախսերի 10.4% թերակատարումն առավելապես պայմանավորված է տնտեսական ծառայություններին, սոցիալական ծառայություններին և կրթությանն ուղղվող ծախսերի թերակատարումով: Դրանց նպաստումներն ընդհանուր թերակատարմանը կազմում են համապատասխանաբար 4.4, 2.0 և 1.5 տոկոսային կետ: Նշված ծախսային ուղղությունների գծով թերակատարումը տարեկան ճշտված պլանի համեմատ կազմել է համապատասխանաբար 12.7%, 14.8% և 14.0%:

Աղյուսակ 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, 2023թ.

Բյուջետային ծախսերի դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հաստատված պլան			Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2022թ. նկատմամբ, %
	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի			
Ընդամենը ծախսեր	105.5	124.1	111.2	105.3	89.6	17.3
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	12.6	13.3	12.1	95.6	90.5	14.5

Բյուջետային ծախսերի դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2022թ.
						նկատմամբ, %
	մլրդ. դրամ			%		
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	12.5	13.1	12.0	96.0	91.1	15.3
Պաշտպանություն	0.1	0.2	0.1	55.4	45.4	-46.3
Տնտեսական ծառայություններ	38.4	47.7	41.6	108.4	87.3	27.2
Տնտեսական հարաբերություններ	27.6	32.5	28.0	101.7	86.4	40.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	10.8	15.2	13.6	125.7	89.2	7.0
Սոցիալական ծառայություններ	14.9	22.4	19.1	127.9	85.2	49.9
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	7.5	10.9	9.0	119.0	82.3	40.9
Առողջապահություն	0.6	1.3	1.1	180.7	80.6	168.9
Հանգիստ, մշակույթ և կրոն	4.8	8.2	7.3	152.0	89.1	58.3
Սոցիալական պաշտպանություն	2.0	2.0	1.7	87.6	88.3	29.4
Կրթություն	36.7	38.0	36.5	99.4	96.0	3.4
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	2.9	2.6	1.9	65.3	71.5	-46.4

Բյուջեի ծախսերի՝ նախորդ տարվա համեմատ 17.3% աճին մեծ չափով՝ 9.4 տոկոսային կետով նպաստել է տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի 27.2% աճը: Աճին մյուս խոշոր նպաստումը սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերինն է. դրանք աճել են 49.9%-ով և ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 6.7 տոկոսային կետով: Սոցիալական ծառայությունների կազմում հիմնականում աճել են «հանգիստ, մշակույթ և կրոն» և «բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժիններին ուղղվող ծախսերը:

3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Ինչպես արդեն նշվել էր, բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել են: **Ավելին, ըստ ծրագրերի՝ ծախսերի կատարման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երևանցիների համար կենսական կարևորություն ունեցող մի շարք ծրագրերի կատարողականը խիստ ցածր է:** Վերլուծության այս բաժնում առանձնացվել են այդ ծրագրերից մի քանիսը:

Աղյուսակ 5-ից երևում է, որ 70%-ից ցածր կատարողական է գրանցվել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են նախագծային աշխատանքների իրականացումը (որոնք անհրաժեշտ են հաջորդ տարիներին կապիտալ ծախսերի պատշաճ մակարդակի իրականացման համար), ոռոգման ցանցի կառուցումը և վերանորոգումը, հետիոտն անցումների կառուցումը և վերանորոգումը, կամրջային կառուցվածքների վերականգնումը և պահպանումը, մայրուղիների և փողոցների վերակառուցումը և հիմնանորոգումը, փողոցների, հրապարակների և այգիների կահավորումը, զբոսաշրջության զարգացումը:

Աղյուսակ 5. Երևան քաղաքի 2023թ. բյուջեի մի շարք կարևոր ծրագրերի կատարողական ցուցանիշները, մլն դրամ


Ծրագիրը	Հաստատված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ, %
Նախագծային աշխատանքներ	1,358.4	834.2	61.4
Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում	678.7	337.7	49.8
Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	3,293.9	2,571.2	78.1
Եզրաքարերի վերանորոգում	319.7	283.5	88.7
Հենապատերի վերանորոգում	173.4	131.5	75.9
Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում	157.6	59.9	38.0
Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում	405.5	235.8	58.2
Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	658.4	447.2	67.9
Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում	391.0	255.4	65.3
Զբոսաշրջության զարգացում	30.5	0.9	2.8
Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում	1,616.4	1,262.3	78.1
Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	5,471.1	4,692.2	85.8
Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում	2,145.3	1,668.5	77.8

4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

Երևան քաղաքի 2023թ. բյուջեն կատարվել է 3.7 մլրդ դրամ հավելուրդով՝ ճշտված պլանով նախատեսված 11.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Հաստատված բյուջեով նույնպես նախատեսվում էր ունենալ պակասուրդային բյուջե, սակայն ոչ թե 11.2, այլ ընդամենը 0.4 մլրդ դրամ պակասուրդով: Այն հանգամանքը, որ ճշտված պլանով բյուջեի դեֆիցիտը ավելացվում է շուրջ 26 անգամ, սակայն փաստացի բյուջեն, ընդհակառակը, կատարվում է զգալի հավելուրդով, թերևս վկայում է այն մասին, որ համայնքային մակարդակում նույնպես առկա են (և ավելի խոր են դրսևորվում) համապետական մակարդակում քրոնիկ դարձած՝ ցուցանիշների պլանավորման լուրջ խնդիրները: Ընդ որում, հաստատված պլանի՝ տարվա ընթացքում կատարված ճշգրտումը հիմնականում վերաբերել է ֆոնդային բյուջեին, և դրանով նախատեսված 432.6 մլն դրամի դեֆիցիտը բարձրացվել է մինչև 11,202.6 մլն դրամ: Ի դեպ, չնայած բյուջեն փաստացի ունեցել է 3.7 մլրդ դրամի հավելուրդ, ֆոնդային բյուջեն, միևնույն է, կատարվել է 9.7 մլրդ դրամ պակասուրդով: Փոխարենը, վարչական բյուջեն կատարվել է 13.4 մլրդ դրամ հավելուրդով (ինչը հիմնականում ընթացիկ ծախսերի թերակատարման հետևանք է):

2023թ. բյուջեի գոյացած հավելուրդը տեղաբաշխվել է ներքին ֆինանսական ակտիվներում, մասնավորապես՝ որպես բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն:

Գծապատկեր 5. Երևան քաղաքի բյուջեի հավելուրդը (պակասուրդը), մլրդ դրամ, 2023թ.



5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով Երևան քաղաքի 2023թ. բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության վերլուծությունը՝ հակիրճ շարադրենք դրա հիմնական դրույթները, ինչպես նաև սույն վերլուծությունում հաշվետվության վերաբերյալ արված առավել էական եզրահանգումները:

- Երևան քաղաքի 2023թ. բյուջեի փաստացի եկամուտները՝ 114.8 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ աճել են 33.2%-ով: Նշված աճին ամենամեծ նպաստումն ունեցել են «Այլ եկամուտներ» դասում ընդգրկված «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» հոդվածով ստացված եկամուտները:
- Անշարժ գույքից գանձվող գույքային հարկերը 2023 թվականին տարեկան ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 15.6%-ով կամ 1.8 մլրդ դրամով: **Քանի որ տարվա ընթացքում գույքահարկի բազան բյուջեի հաստատման պահի համեմատ չի նվազել (անշարժ գույքից գանձվող գույքային հարկերի՝ հաստատված պլանով նախատեսված մեծությունը տարեկան ճշտված պլանում մնացել է անփոփոխ), անշարժ գույքի հարկի՝ պլանավորվածից պակաս հավաքագրումը ենթադրաբար բացատրվում է վարչարարության անարդյունավետությամբ: Ուստի, քաղաքային իշխանություններին անհրաժեշտ է կոնկրետ քայլեր ձեռնարկել վարչարարության բարելավումն ապահովելու ուղղությամբ:**
- 2023թ. բյուջեի ծախսերը՝ 111.2 մլրդ դրամ, թեև 17.3%-ով գերազանցում են նախորդ տարվա նույն ցուցանիշին, այնուամենայնիվ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 10.4%-ով: **Ընդհանուր ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Հատկանշական է, որ ընդհանուր ծախսերի թերակատարումը վերաբերում է և՛ վարչական, և՛ ֆոնդային բյուջեներին: Ի դեպ, ճշտված պլանի նկատմամբ բյուջեի ծախսերի թերակատարում է արձանագրվել թե՛ ըստ գործառնական և թե՛ ըստ տնտեսագիտական դասակարգման բոլոր բաժինների գծով, ինչը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի հետ կապված խնդիրներով, կնքված պայմանագրերի կատարողականով և պատվիրակված լիազորությունների մասամբ չիրականացմամբ:**
- Պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերը 2022-ի համեմատ եռապատկվել են:
- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) շարունակել են թերակատարվել. ճշտված պլանի նկատմամբ

թերակատարումը 2023թ. կազմել է 21.2%: **Սա ևս մեկ ապացույց է, որ կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների հետ կապված համապետական մակարդակում շարունակաբար արձանագրվող լուրջ խնդիրներն առկա են նաև համայնքային մակարդակում:**

- Երևան քաղաքի 2023թ. բյուջեի ծախսերի՝ ըստ իրականացված ծրագրերի վերլուծությունը փաստում է, որ մի շարք առաջնահերթ ծրագրերի գծով (ինչպիսիք են ոռոգման ցանցի կառուցումը և վերանորոգումը, հետիոտնային անցումների կառուցումն ու վերանորոգումը, կամրջային կառուցվածքների վերականգնումն ու պահպանումը, մայրուղիների և փողոցների վերակառուցումն ու հիմնանորոգումը, փողոցների, հրապարակների և այգիների կահավորումը և այլն) առկա են լուրջ թերակատարումներ: **Ստացվում է, որ մի կողմից՝ քաղաքային իշխանությունների թերի աշխատանքի պատճառով քաղաքացու համար կենսական կարևորություն ունեցող ծրագրերով ծախսերը թերակատարվում են, մյուս կողմից՝ առանց քաղաքացու համար պատշաճ ծառայություններ ապահովելու՝ կտրուկ բարձրացվում են հարկերն ու տեղական վճարները:**
- Բյուջեն ունեցել է 3.7 մլրդ դրամի հավելուրդ՝ ճշտված պլանով նախատեսված 11.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: **Ուշագրավ է, որ տարվա ընթացքում ճշտված պլանով ծրագրվող պակասուրդը հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ էապես բարձրացվել է՝ շուրջ 26 անգամ, սակայն արդյունքում փաստացի ձևավորվել է հավելուրդ: Այս հանգամանքը թերևս վկայում է այն մասին, որ համապետական մակարդակում ցուցանիշների պլանավորման քրոնիկ դարձած խնդիրները համայնքային մակարդակում նույնպես առկա են, ավելին՝ առավել խոր են դրսևորվում:**

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: